

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՐՈՄԵՏՐ 2019-2020

Հետազոտության համառոտ նկարագրություն

Կովկասյան բարոմետրը (ԿԲ) տարածաշրջանային հետազոտություն է, որն իրականացվում է Հարավային Կովկասի երեք երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում: Ծրագիրը նպատակ ունի ուսումնասիրել տարածաշրջանում սոցիալական, քաղաքական և տնտեսական գործընթացների վերաբերյալ հանրային կարծիքը: Հարցման առաջին փուլն իրականացվել է 2004թ-ին երեք երկրների մայրաքաղաքներում: 2006թ-ից հետազոտությունն ընդգրկում է ինչպես մայրաքաղաքներն, այնպես էլ այլ քաղաքային և գյուղական բնակավայրերը¹: 2015թ-ից հետո ԿԲ-ն իրականացվել է միայն Հայաստանում և Վրաստանում:

Հարցման գործիքակազմ

Հարցման համար օգտագործվող հարցաթերթը կազմել են Հարավային Կովկասի երեք երկրները ներկայացնող մասնագետները:

Հիմնական հարցաթերթը պարունակում է Հարավային Կովկասի երկրներում ժողովրդագրական, սոցիալական, քաղաքական և տնտեսական զարգացումների վերաբերյալ ավելի քան 100 հարց՝ ինչպես անհատական, այնպես էլ տնային տնտեսությունների մակարդակով: Թեև հիմնական հարցաթերթը մնում է անփոփոխ, սակայն այս երկրներում տեղի ունեցող սոցիալական, քաղաքական և տնտեսական վերջին զարգացումները հասկանալու նպատակով տարեցտարի նոր հարցեր են ավելացվում: Օրինակ՝ 2019թ հայաստանյան հարցաթերթում ընդգրկվել են հարցեր թավշյա հեղափոխության, դրան հաջորդած իրադարձությունների ու վերափոխումների, շրջակա միջավայրի և այլ արդի հիմնախնդիրների վերաբերյալ:

Հարցման մեթոդաբանություն

Ինչպես նախորդ տարիներին, ԿԲ-2019թ-ի համար ևս կիրառվել է բազմաստիճան կլաստերային ընտրանք, որն ընդգրկել է Հայաստանի և Վրաստանի չափահաս բնակչությունը: Յուրաքանչյուր երկրի սահմաններում տարանջատվել են մայրաքաղաքային, քաղաքային և գյուղական մակրոստրատաներ, որոնցից յուրաքանչյուրը բաժանվել է հյուսիսարևելյան, հյուսիսարևմտյան, հարավարևելյան և հարավարևմտյան աշխարհագրական տարածաշրջանների: Ընտրանքի առաջին փուլում յուրաքանչյուր ստրատայում պատահականորեն ընտրվել են ընտրատեղամասեր՝ վերջիններիս չափի համամասնության սկզբունքով: Երկրորդ փուլում թիրախային տնային տնտեսությունների թիվը որոշվել է պատահական սկզբնակետով: Վերջին՝ երրորդ փուլում, հարցվողների ընտրության համար կիրառվել է Քիշի աղյուսակը: 2019թ-ի դեմ առ դեմ հարցազրույցներին մասնակցել է 3808 հարցվող (Հայաստանում 1491, Վրաստանում 2317):

Տվյալների հասանելիություն

Հարցաթերթը, ցուցադրաքարտերը, ընտրանքի մեթոդաբանության մանրամասն նկարագրությունը, տվյալների շտեմարանը (SPSS և STATA ձևաչափերով) և որոշ արդյունքներ հասանելի են Կովկասյան Բարոմետրի² և ՀԿԿ-Հայաստանի³ պաշտոնական կայքերում:

Կովկասյան բարոմետրի 2019-2020թթ հետազոտությունն իրականացվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն(ՀԿԿ)-Հայաստան հիմնադրամի կողմից՝ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի աջակցությամբ:



¹ Հարցումներ չեն անցկացվել Էստոնիայի Ղարաբաղում, Նախիջևանում, Աբխազիայում և Հարավային Օսիայում:

² www.caucasusbarometer.org

³ <https://www.crcc.am/barometer/>